

Հաստատված է
«ԲՏԱ Ինվեստբանկ» ՓԲԸ
Խորհրդի արձանագրությամբ

N16 առ 03.08.2007թ.

Խորհրդի նախագահ

_____ Ա. Պողոսյան
ստորագրություն

Մ.Պ.

**«ԲՏԱ Ինվեստբանկ» ՓԲԸ գործադիր մարմնի աշխատանքի գնահատման
կարգ**

Երևան 2007

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույն կարգը նպատակ է հետապնդում կանոնակարգել «ԲՏԱ ԻնվեստԲանկ» ՓԲԸ (այսուհետև՝ Բանկ) գործադիր տնօրենի կամ վարչության (այսուհետև՝ գործադիր մարմին) կատարած աշխատանքի գնահատման գործընթացը:
- 1.2 Բանկի գործադիր մարմնի աշխատանքի գնահատման գործառույթը վերապահվում է Բանկի խորհրդին:
- 1.3 Գործադիր մարմնի աշխատանքի գնահատման գործընթացն իրականացվում է յուրաքանչյուր տարի՝ բանկի գործունեության տարեկան արդյունքներով:
- 1.4 Բանկի խորհուրդը գործադիր մարմնի աշխատանքի գնահատման գործընթացի ժամանակ առաջնորդվում է սույն կարգով սահմանված գնահատման ցուցանիշներով և քանակական գնահատականներով:

2. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- 2.1 Բանկի գործադիր մարմնի աշխատանքների գնահատման գործընթացն իրականացվում է՝ ելնելով բանկի հեռանկարային զարգացման ուղղությամբ պլանավորված առանձին ցուցանիշների (հաշվեկշռի, եկամուտների և ծախսերի առանձին հոդվածների մեծության, վարկային ներդրումների որակական մակարդակի) կատարողականի գնահատման, ինչպես նաև բանկի ֆինանսական ընդհանուր վիճակը բնութագրող տեղեկատվության վերլուծության սկզբունքներից ելնելով:
- 2.2 Բանկի գործադիր մարմնի աշխատանքների գնահատման ժամանակ Բանկի խորհուրդը հիմնվում է սույն կետի 2.2.1-ից 2.2.3 ենթակետերում նշված ցուցանիշների քանակական գնահատականների վրա: Ընդ որում, ներքոհիշյալ ցուցանիշների մեջ ընդգրկվող տարրերը գնահատվում են 1, 2, 3, 4, 5 միավորներով, որտեղ 1 և 2 միավորները համարժեք են «անբավարար» գնահատականին, 3 միավորը՝ «բավարար» գնահատականին, 4 միավորը՝ «լավ» գնահատականին, 5 միավորը՝ «գերազանց» գնահատականին:

2.2.1 Հաշվեկշռային ցուցանիշների, ինչպես նաև եկամուտների և ծախսերի պլանավորված մեծությունների կատարողական,

2.2.2 Վարկային ներդրումների որակական մակարդակ

2.2.3 Կապիտալի և ակտիվների շահութաբերության մակարդակ

3. ԿԻՐԱՌՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԿԱՅՔԵՐԸ

- 3.1 Հաշվեկշռային ցուցանիշների, ինչպես նաև եկամուտների և ծախսերի պլանավորված մեծությունների կատարողականի գնահատում
- 3.1.1 Հաշվեկշռային պլանավորված հոդվածների կատարողականի գնահատման ժամանակ դիտարկման առարկա են հանդիսանում հետևյալ ցուցանիշները.

- ա. Ընդհանուր ակտիվների մեծությունը
- բ. Վարկային ներդրումների մեծությունը
- գ. Ընդհանուր պարտավորությունների մեծությունը
- դ. Ժամկետային ավանդների մեծությունը
- ե. Ընդհանուր կապիտալի մեծությունը

Սույն կետի ա), բ), գ), դ), ե) ենթակետերում նշված ցուցանիշների գնահատման միջակայքերն են.

Պլանավորված ցուցանիշների թերակատարման դեպքում

- ա. պլանավորվածի համեմատ --20%-ից ավել կատարողականի շեղման դեպքում՝ 1 միավոր
- բ. պլանավորվածի համեմատ --15%-20% կատարողականի շեղման դեպքում՝ 2 միավոր
- գ. պլանավորվածի համեմատ -- 10%-15% կատարողականի շեղման դեպքում՝ 3 միավոր
- դ. պլանավորվածի համեմատ -- 0%-10% կատարողականի շեղման դեպքում՝ 4 միավոր
- ե. պլանավորված ցուցանիշների գերակատարման դեպքում՝ 5 միավոր

3.1.2 Եկամուտների և ծախսերի պլանավորված հոդվածների կատարողականի գնահատման ժամանակ դիտարկման առարկա են հանդիսանում հետևյալ ցուցանիշները.

- ա. տոկոսային եկամուտների մեծությունը,
- բ. ոչ տոկոսային եկամուտներ մեծությունը,
- գ. տոկոսային ծախսեր մեծությունը,
- դ. ոչ տոկոսային ծախսեր մեծությունը,
- ե. ոչ տոկոսային եկամուտների և ոչ տոկոսային ծախսերի հարաբերակցությունը:

Սույն կետի ա) և բ) ենթակետերում նշված ցուցանիշների գնահատման միջակայքերն են.

Պլանավորված ցուցանիշների թերակատարման դեպքում

- ա. պլանավորվածի համեմատ --20%-ից ավել կատարողականի շեղման դեպքում՝ 1 միավոր
- բ. պլանավորվածի համեմատ --15%-20% կատարողականի շեղման դեպքում՝ 2 միավոր
- գ. պլանավորվածի համեմատ -- 10%-15% կատարողականի շեղման դեպքում՝ 3 միավոր
- դ. պլանավորվածի համեմատ -- 0%-10% կատարողականի շեղման դեպքում՝ 4 միավոր
- ե. պլանավորված ցուցանիշների գերակատարման դեպքում՝ 5 միավոր

Սույն կետի գ) և դ) ենթակետերում նշված ցուցանիշների գնահատման միջակայքերն են.

Պլանավորված ցուցանիշների գերակատարման դեպքում.

- ա. պլանավորվածի համեմատ --20%-ից ավել կատարողականի շեղման դեպքում՝ 1 միավոր
- բ. պլանավորվածի համեմատ --15%-20% կատարողականի շեղման դեպքում՝ 2 միավոր
- գ. պլանավորվածի համեմատ -- 10%-15% կատարողականի շեղման դեպքում՝ 3 միավոր
- դ. պլանավորվածի համեմատ -- 0%-10% կատարողականի շեղման դեպքում՝ 4 միավոր
- ե. պլանավորված ցուցանիշների գերակատարման դեպքում՝ 5 միավոր

Սույն կետի բ) ենթակետում նշված ցուցանիշի գնահատման միջակայքերն են.

- ա. մինչև --70% կատարողականի դեպքում՝ 1 միավոր
- բ. 70%-ից մինչև 80% կատարողականի դեպքում՝ 2 միավոր
- գ. 80%-ից մինչև 90% կատարողականի դեպքում՝ 3 միավոր
- դ. 90%-ից մինչև 100% կատարողականի դեպքում՝ 4 միավոր
- ե. 100% և ավել կատարողականի դեպքում՝ 5 միավոր

3.2 Վարկային ներդրումների որակական մակարդակ

ա. Դասակարգված վարկերի տեսակարար կշիռը վարկային ներդրումներում հաշվարկման համար հիմք են ընդունվում ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված ամսական հաշվետվություններում արտացոլված տվյալները: Այս ցուցանիշի գնահատման համար անհրաժեշտ է հաշվարկել 12 ամիսների (յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ) դասակարգված վարկերի մեծությունների հանրագումարը և այն հարաբերել 12 ամիսների (յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ) վարկային ներդրումների հանրագումարի վրա՝ ստանալով միջին կշռված տոկոսադրույք: Ընդ որում, յուրաքանչյուր ամսվա դասակարգված վարկերի մեջ ներառվում են նաև տվյալ տարվա 12 ամիսների ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված վարկերի մնացորդները և այդ վարկերի գծով կատարված մարումները (զուտ դուրսգրումները):

Գնահատման միջակայքերն են՝

- ա. մինչև 5 %՝ 5 միավոր
- բ. 6%-10%՝ 4 միավոր
- գ. 10% - 20%՝ 3 միավոր
- դ. 20% - 30 %՝ 2 միավոր
- ե. 30%-ից ավել՝ 1 միավոր

բ. խոշոր (ընդհանուր կապիտալի 5%-ը գերազանցող) վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում (հաշվարկման համար հիմք է ընդունվում ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված ամսական հաշվետվություններում արտացոլված տվյալները): Այս ցուցանիշի գնահատման համար անհրաժեշտ է հաշվարկել 12 ամիսների (յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ) խոշոր վարկերի մեծությունների հանրագումարը և այն հարաբերել 12 ամիսների (յուրաքանչյուր ամիսը՝ միջին ամսական մեծությամբ) ընդհանուր կապիտալների հանրագումարի վրա՝ ստանալով միջին կշռված տոկոսադրույք:

Գնահատման միջակայքերն են՝

- ա. մինչև 70 %՝ 5 միավոր
- բ. 70% - 75%՝ 4 միավոր
- գ. 75% - 85%՝ 3 միավոր
- դ. 85% - 95 %՝ 2 միավոր
- ե. 95%-ից ավել՝ 1 միավոր

3.4 Կապիտալի և ակտիվների շահութաբերության մակարդակ

Կապիտալի շահութաբերության (ROE) հաշվարկման ժամանակ հիմք են ընդունվում բանկի հաշվեկշռային տվյալները հաշվետու տարվա վերջի դրությամբ (ցուցանիշը հաշվարկվում է որպես հաշվետու տարվա վերջի դրությամբ կուտակված շահույթի և բանկի ընդհանուր կապիտալի հարաբերակցություն):

Գնահատման միջակայքերն են՝

- ա. մինչև 3 %՝ 1 միավոր
- բ. 3% - 5%՝ 2 միավոր
- գ. 5% - 6%՝ 3 միավոր
- դ. 6% - 8 %՝ 4 միավոր
- ե. 8%-ից ավել՝ 5 միավոր

Ակտիվների շահութաբերության (ROA) հաշվարկման ժամանակ հիմք են ընդունվում հաշվետու տարվա վերջի դրությամբ ՀՀ ԿԲ ներկայացված հաշվետվությունների տվյալները (ցուցանիշը հաշվարկվում է որպես հաշվետու տարվա վերջի դրությամբ կուտակված շահույթի և բանկի ընդհանուր ակտիվների միջին տարեկան մեծության հարաբերակցություն):

Գնահատման միջակայքերն են՝

- ա. մինչև 2%՝ 1 միավոր
- բ. 2%-ից ավել՝ 5միավոր

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓՈՒՄ

4.1 Գնահատման գործընթացի ամփոփումն իրականացվում է սույն կարգի անբաժանելի մասը հանդիսացող հավելված 1-ի տեսքով հետևյալ կերպ.

4.1.1 Սույն կարգի 2.2 կետում նշված ցուցանիշների յուրաքանչյուր խմբի տրվում է որոշակի կշիռ, որոնց հանրագումարը պետք է հավասար լինի 1-ի, ընդ որում, յուրաքանչյուր խմբի կշռի մեծությունը պայմանավորվում է գնահատման գործընթացում տվյալ խմբի կարևորությամբ:

4.1.2 Սույն կարգի 2.2 կետում նշված ցուցանիշների մեջ ընդգրկվող յուրաքանչյուր տարր գնահատվում է սույն կարգի 3-րդ բաժնում նշված միջակայքերին համապատասխան: Ընդ որում, յուրաքանչյուր ցուցանիշի մեջ ընդգրկվող տարրերի գնահատականների միջին մեծությունը հանդիսանում է տվյալ ցուցանիշի գնահատականը:

4.1.3 Յուրաքանչյուր ցուցանիշի գնահատականը կշռվում է համապատասխան գործակցով, որի արդյունքում ձևավորվում է տվյալ ցուցանիշի կշռված գնահատականը:

4.1.4 Բոլոր ցուցանիշների կշռված գնահատականների հանրագումարը հանդիսանում է բանկի գործադիր մարմնի կատարած աշխատանքի ընդհանուր գնահատականը, որը բնութագրվում է հետևյալ կերպ.

ա) եթե ցուցանիշների կշռված գնահատականը կազմում է մինչև 3 միավոր (ներառյալ)՝ գործադիր մարմնի աշխատանքը գնահատվում է անբավարար,

բ) եթե ցուցանիշների կշռված գնահատականը կազմում է 3 միավորից մինչև 4 միավոր (ներառյալ)՝ գործադիր մարմնի աշխատանքը գնահատվում է բավարար,

գ) եթե ցուցանիշների կշռված գնահատականը կազմում է 4 միավորից մինչև 4,5 միավոր (ներառյալ)՝ գործադիր մարմնի աշխատանքը գնահատվում է լավ,

դ) եթե ցուցանիշների կշռված գնահատականը կազմում է 4,5 միավորից մինչև 5 միավոր (ներառյալ)՝ գործադիր մարմնի աշխատանքը գնահատվում է գերազանց:

4.2 Բանկի գործադիր մարմնի կատարած աշխատանքի գնահատման ժամանակ Բանկի խորհուրդը, բացի սահմանված քանակական ցուցանիշներից, կարող է նաև որակական գնահատական տալ Բանկի գործադիր մարմնի կատարած աշխատանքին՝ հաշվի առնելով Բանկի գործունեությանն

առնչվող այլ ուղղությունների վերաբերյալ ձեռնարկված միջոցառումները (իրավական ակտերի՝ կարգերի և կանոնակարգերի պահանջների պատշաճ կատարում, ռիսկերի գնահատման և կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրման գործընթաց և այլն):

Որակական գնահատականների ամփոփման արդյունքում Բանկի գործադիր մարմնի կատարած աշխատանքի ընդհանուր գնահատականը կարող է ճշգրտվել:

5. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն կարգով սահմանված կարգով Բանկի խորհուրդը գործադիր մարմնի կատարած աշխատանքը գնահատում է բանկի գործունեության տարեկան արդյունքները քննարկելիս՝ հաշվետու տարվա ավարտից հետո եռամսյա ժամկետում:

5.2 Սույն կարգով սահմանված ցուցանիշների հաշվարկման պատասխանատվությունը դրվում է Բանկի անալիզի և բյուջեի պլանավորման բաժնի վրա, իսկ վերահսկողությունը և խորհրդին ներկայացման պատասխանատվությունը՝ Բանկի ներքին աուդիտի ծառայության պետի վրա:

Հավելված 1

Անվանում	Գնահատական	Կշիռ	Կշռված գնահատական (2*3)
1	2	3	4
Հաշվեկշռային հոդվածների պլանի կատարողական, ա. ք.		0.3	
Ընդհանուր Ակտիվներ			
Վարկեր			
Պարտավորություններ			
Ժամկետային ավանդներ			
Ֆինանսական արդյունքների պլանի կատարողական, ա. ք.		0.2	
եկամուտ			
ըչ %-ին եկամուտներ/ըչ %-ին ծախսեր			
Վարկային ներդրումների որակական մակարդակ, ա. ք.		0.3	
Դ.ա.ս. վարկեր/վարկային ներդ.			
Խոշոր վարկեր/կապիտալ			
Կապիտալի և ակտիվների շահութաբերության մակարդակ, ա. ք.		0.2	
ROE			
ROA			
ԸՆԴԱՄԵՆԸ		1.0	